



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 30.09.2014

թվականի թիվ 01 որոշմամբ,

Գիտական խորհրդի 24.05.2017

թվականի թիվ 08 որոշմամբ հաստատվել է

նոր խմբագրությամբ

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՐԻՅԹՆԵՐ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կլինիկական օրդինատուրան (այսուհետ՝ Կլինիկական օրդինատուրա) առողջապահական բնագավառի բարձրագույն մասնագիտական առկա կրթության ձև է, որն իրականացվում է կրթական ծրագրերով:

2. Կլինիկական օրդինատուրան բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա համապատասխան մասնագիտության կրթական ծրագրով բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստումն է:

3. Կլինիկական օրդինատուրայի նպատակն է առողջապահության բնագավառում ինքնուրույն աշխատանքային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող բարձր որակավորմամբ՝

- բժիշկ-մասնագետների՝ այդ թվում ստոմատոլոգիական մասնագիտություններով,
- մասնագետների,
- դեղագետ-մասնագետների պատրաստումը:

4. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, սույն կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

5. Կլինիկական օրդինատուրայում ուսման տևողությունը որոշվում է Համալսարանի կողմից՝ 1-ից 5 տարվա սահմաններում՝ կախված մասնագիտության կրթական ծրագրից:

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Կլինիկական օրդինատուրա կարող են ընդունվել՝

- մրցութային կարգով, անվճար՝ նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, պետական կրթաթոշակի վճարմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամ
- վճարովի հիմունքներով:

7. Անվճար համակարգում Կլինիկական օրդինատուրայի ընդունելությունը կատարվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարի կողմից սահմանված ժամանակացույցի համաձայն:

Ռազմական բժիշկների ընդունելությունն Կլինիկական օրդինատուրա իրականացվում է ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից սահմանված կարգով:

8. Կլինիկական օրդինատուրայի ընդունելության մրցութի հայտարարությունը տրվում է առնվազն 2000 տպաքանակ ունեցող ՀՀ տարածքում գործող լրատվական միջոցներով և Համալսարանի պաշտոնական կայքով:

9. Կլինիկական օրդինատուրայի ընդունելության և բողոքարկման հանձնաժողովների կազմերը հաստատվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

10. Կլինիկական օրդինատուրայի ընդունելության համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- ա) ռեկտորին ուղղված դիմում,
- բ) բարձրագույն կրթության դիպլոմները (բակալավրիատի և մագիստրատուրայի կամ համարժեք) և հավելվածները՝ պատճեններով,
- գ) անվճար տեղերի մրցութին մասնակցելու համար.
 - ԵՊԲՀ շրջանավարտները ներկայացնում են տեղեկանք՝ միջառարկայական թեստային և բանավոր քննությունների արդյունքների վերաբերյալ՝ համապատասխան ֆակուլտետի դեկանի ստորագրությամբ,
 - այլ բժշկական բուհերի շրջանավարտների համար հիմք են հանդիսանում՝ ԵՊԲՀ-ում հանձնած միջառարկայական թեստային և բանավոր քննությունների տեղեկագրերում նշանակված գնահատականները,
 - դ) անձնագիր կամ նույնականացման քարտ՝ պատճենով,

ե) անհատական տվյալների թերթիկ,

զ) զինվորական գրքույկ (առկայության դեպքում) կամ զինվորական հաշվառման մասին տեղեկանք,

է) չորս լուսանկար՝ 3-4 չափի:

Այլ ոչ բժշկական բուհերի՝ կենսաբանություն, բժշկական կենսաքիմիա, դեղագիտություն մասնագիտություններով շրջանավարտները ներկայացնում են մագիստրոսի աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ

Ուսուցման անվճար տեղերի մրցույթ

11. Կլինիկական օրդինատուրայում ուսուցման անվճար տեղերի համար մրցույթն անցկացվում է ամփոփիչ համակարգչային միջառարկայական թեստային քննության և բանավոր ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքների միջին թվաբանականով՝ առավելագույնից նվազման սկզբունքով, հետևյալ կարգով՝

ա) ԵՊԲՀ բարձրագույն կրթության շրջանավարտների ամփոփիչ համակարգչային թեստային քննության և բանավոր ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնումը հավասարազոր է Կլինիկական օրդինատուրայի ընդունելության քննությունների հետ.

բ) ԵՊԲՀ այն շրջանավարտները, ովքեր չունեն միջառարկայական համակարգչային թեստային քննության արդյունքներ՝ մրցույթին մասնակցում են հանձնելով Համալսարանի միջառարկայական թեստային քննություն: Վերջնական արդյունքը հաշվարկվում է համակարգչային թեստային քննության և դիպլոմի հավելվածի բանավոր ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքներով.

գ) այլ բժշկական բուհերի շրջանավարտները Կլինիկական օրդինատուրայի ընդունելության ժամանակ հանձնում են համակարգչային միջառարկայական թեստային և բանավոր քննություններ, որոնք բովանդակային առումով նույնն են ԵՊԲՀ-ի ամփոփիչ համակարգչային թեստային քննության և բանավոր ամփոփիչ ատեստավորման քննությունների հետ::

12. Այլ բժշկական բուհերից կլինիկական օրդինատուրայի անվճար տեղերի համար բանավոր առարկայական քննություններն ընդունում է Համալսարանի համապատասխան հանձնաժողովը:

13. Կլինիկական օրդինատուրայի բանավոր ամփոփիչ քննությունների արդյունքները գնահատվում են Համալսարանում գործող գնահատման համակարգով և հայտարարվում՝ անմիջապես քննությունից հետո:

14. Անվճար տեղերի մրցույթի արդյունքներով մասնագիտությունների թափուր տեղեր մնալու դեպքում՝ Համալսարանը ՀՀ Կրթության և գիտության

նախարարությանը ներկայացնում է առաջարկություն՝ մասնագիտությունների մրցութային տեղերի վերաբաշխում կատարելու մասին:

Ուսուցման նպատակային տեղերի մրցույթ

15. Կլինիկական օրդինատուրայի ուսուցման նպատակային տեղերում ընդունվելու համար՝ ԵՊԲՀ և այլ բժշկական բուհերի շրջանավարտները, ովքեր չունեն ԵՊԲՀ համակարգչային միջառարկայական թեստային քննության արդյունքներ, հանձնում են միայն միջառարկայական համակարգչային թեստային քննություն և մրցույթը կազմակերպվում է թեստային քննության և դիպլոմի հավալվածի բանավոր ամփոփիչ աստեստավորման արդյունքների միջին թվաբանականով՝ առավելագույնից նվազման սկզբունքով:

16. Նպատակային տեղերի մրցույթի արդյունքներով մասնագիտությունների թափուր տեղեր մնալու դեպքում՝ ԵՊԲՀ-ն ներկայացնում է առաջարկություն, ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը՝ մասնագիտությունների մրցութային տեղերի վերաբաշխում կատարելու մասին:

Ուսուցման վճարովի տեղերի մրցույթ

17. ԵՊԲՀ ավարտական փաստաթղթի առկայությունը շրջանավարտին իրավունք է տալիս ընդունվել Կլինիկական օրդինատուրայի վճարովի համակարգ:

18. Այլ բժշկական բուհերի շրջանավարտները Կլինիկական օրդինատուրայի վճարովի համակարգ ընդունվելու համար հանձնում են միայն միջառարկայական համակարգչային թեստային քննություն:

Միջառարկայական համակարգչային ամփոփիչ աստեստավորում

19. Կլինիկական օրդինատուրայի միջառարկայական համակարգչային թեստային քննությունը բաղկացած է 150 հարցերից հետևյալ համամասնությամբ՝

- ա) Բուժական մասնագիտությունների համար՝
 - վիրաբուժություն 50,
 - թերապիա 50,
 - մանկաբարձություն և գինեկոլոգիա 50:
- բ) Ստոմատոլոգիական մասնագիտությունների համար՝
 - թերապևտիկ ստոմատոլոգիա 50,
 - վիրաբուժական ստոմատոլոգիա 50,
 - օրթոպեդիկ ստոմատոլոգիա 50:
- գ) Դեղագիտական մասնագիտությունների համար՝
 - դեղագործական տեխնոլոգիա և կենսատեխնոլոգիա 50,
 - դեղագործության կառավարում և էկոնոմիկա 50,

– դեղագիտական անալիզ 50:

20. Միջառարկայական համակարգչային թեստային քննական դրական արդյունք է համարվում յուրաքանչյուր առարկայից առաջադրված թեստային փաթեթի հարցերի 50 տոկոսից ավելի դրական պատասխանները (26 միավոր և ավելի):

21. Կլինիկական օրդինատուրայի միջառարկայական թեստային քննության համար յուրաքանչյուր դիմորդի թեստային փաթեթին պատասխանելու համար տրվում է 150 րոպե՝ յուրաքանչյուր հարցի համար 1 րոպե:

22. Կլինիկական օրդինատուրայի թեստային քննության բաղադրիչի անբավարար ստացած կամ քննությունը չհանձնած դիմորդին չի թույլատրվում մասնակցել առարկայական բանավոր քննություններին:

23. Բանավոր առարկայական քննության անբավարար գնահատականի դեպքում նշանակվում է բանավոր քննության անբավարար գնահատական:

24. Կլինիկական օրդինատուրայի ընդունելության քննությունների որևէ փուլին չներկայացած դիմորդն իր կարգավիճակով հավասարեցվում է այդ փուլում անբավարար ստացած դիմորդին:

25. Միջառարկայական համակարգչային և բանավոր առարկայական քննությունների ընթացքը և տվյալները արձանագրվում, տեսաձայնագրվում և պահպանվում են քննության ավարտից հետո 24 ժամվա ընթացքում:

26. Կլինիկական օրդինատուրայի դիմորդն իրավունք ունի բողոքարկելու համակարգչային միջառարկայական թեստային՝ յուրաքանչյուր բաղադրիչը առավելագույնը մինչև 3 (երեք) թեստ և բանավոր քննության արդյունքները՝ քննության ավարտից հետո 1 ժամվա ընթացքում:

27. Բժշկական բուհերի բժշկական, ստոմատոլոգիական և դեղագիտական մասնագիտություններով շրջանավարտներին կլինիկական օրդինատուրայի ավարտին շնորհվում է համապատասխան մասնագիտությամբ՝ այդ թվում ստոմատոլոգիական մասնագիտություններով՝ «Բժիշկ-մասնագետի», «Դեղագետ-մասնագետի» որակավորումներ:

28. Ոչ բժշկական բուհերի՝ կենսաբանություն, բժշկական կենսաքիմիա, դեղագիտություն մասնագիտություններով շրջանավարտներն կլինիկական օրդինատուրայի ավարտին շնորհվում է համապատասխան մասնագիտությամբ «Մասնագետի» որակավորում:

29. Կլինիկական օրդինատուրա ընդունված սովորողի հետ կնքվում է կրթության մասին պայմանագիր:

30. Կլինիկական օրդինատուրայում երկրորդ մասնագիտություն ստանալը կարող է իրականացվել միայն վճարովի սկզբունքով՝ բացառությամբ նպատակային ուսուցման համար հատկացված մրցույթային տեղերի:

ԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

31. Կլինիկական օրդինատուրայի կրթական կանոնները սահմանվում են սույն կանոնակարգով և Համալսարանի այլ իրավական ակտերով:

Կլինիկական օրդինատորների վրա տարածվում են նաև Համալսարանի ներքին կարգապահական կանոնները:

32. Կլինիկական օրդինատորը պարտավոր է լիարժեք մասնակցել ուսումնական գործընթացին: Կիսամյակի ընթացքում մինչև 12 օր բացակայությունների դեպքում թույլատրվում է լրացնել բաց թողնված դասերը՝ ուսումնառության ընթացքում: Կլինիկական օրդինատուրայում բացակայությունների լրացման ժամանակացույցը սահմանվում է համապատասխան ամբիոնի կողմից և ներկայացվում Հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի դեկանի հաստատմանը:

Կիսամյակի ընթացքում 12 և ավելի օրեր բացակայությունների դեպքում՝ ուսանողը պարտավոր է ներկայացնել հիմնավորված փաստաթղթեր: Համալսարանն իրավունք ունի երկարացնելու Կլինիկական օրդինատուրայի ուսման տևողությունը՝ բացակայած օրերի թվին համապատասխան:

Կիսամյակի ընթացքում 30 և ավելի օրեր հիմնավորված բացակայությունների դեպքում Համալսարանն իրավունք ունի առաջարկուլու ձևակերպել ակադեմիական արձակուրդ, իսկ անհարգելի բացակայությունների դեպքում՝ հեռացնել կլինիկական օրդինատորին:

33. Կլինիկական օրդինատուրայի տարեկան ուսման վճարը սահմանվում է Համալսարանի կանոնակարգով, որն արտացոլվում է պայմանագրում և ենթակա չէ փոփոխման ողջ ուսումնառության ընթացքում:

Կլինիկական օրդինատորի կրթության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերի համաձայնությամբ կամ միակողմանի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կողմերից մեկի չկատարելու, կամ Համալսարանից կլինիկական օրդինատորին հեռացնելու դեպքերում, կամ կլինիկական օրդինատորի նախաձեռնությամբ:

Կլինիկական օրդինատորի նախաձեռնությամբ սույն պայմանագիրը լուծվելու կամ Համալսարանից հեռացվելու դեպքում Համալսարանի կողմից կատարվում է

վերջնահաշվարկ, ըստ որի ուսման վճարի մուծման պարտականությունը ավարտվում է ազատման մասին հրամանով նշված ամսաթվին հաջորդող ամսվա 1-ից:

34. Վճարովի համակարգում կլինիկական օրդինատուրայի ընդունելության հրամանը տրվում է ուսման կիսամյակային վճարը վճարելուց հետո: Յուրաքանչյուր հաջորդ կիսամյակի վարձավճարը վճարվում է կիսամյակի մեկնարկից հետո 1 ամսվա ընթացքում:

35. Կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրերն իրականացվում են Համալսարանի ամբիոններում և/կամ կլինիկական բազաներ հանդիսացող առողջապահական հաստատություններում:

36. Կլինիկական օրդինատորների ղեկավարներ նշանակվում են Համալսարանի ամբիոնների մասնագետները, ում վերահսկողությամբ կլինիկական օրդինատորը ուսումնառում է տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ:

37. Կլինիկական օրդինատորների մասնագիտական կրթությունն իրականացվում է կրթական ծրագրերի հիման վրա, որոնք երաշխավորված են հետդիպլոմային ուսումնամեթոդական հանձնաժողովի կողմից, հաստատված՝ Համալսարանի ռեկտորի կողմից և ենթակա են վերանայման ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ:

38. Կլինիկական օրդինատորի կրթական ծրագրի ծավալի ոչ պակաս քան 75 տոկոսը հատկացվում է հիմնական մասնագիտությանը, իսկ մինչև 25 տոկոսը՝ հարակից առարկաներին, որոնք կարող են իրականացվել երկրորդ կիսամյակից սկսած:

39. Համապատասխան հրավերի առկայության դեպքում, Համալսարանի ռեկտորի թույլտվությամբ՝ կլինիկական օրդինատորն իրավունք ունի առանց ընդհատման՝ ծրագրի որոշ բաժիններ անցնելու օտարերկրյա առողջապահական հաստատություններում և/կամ կլինիկաներում՝ որոշակի ժամկետով, որի ավարտից հետո կլինիկական օրդինատորը պետք է ներկայացնի օտարերկրյա առողջապահական հաստատությունից կամ կլինիկայից ուսումնառության վերաբերյալ նկարագրական նամակ:

Համալսարանի և այլ կազմակերպությունների միջև համաձայնագրերի և համատեղ ծրագրերի շրջանակներում կլինիկական օրդինատորների ուսումնառությունը կարող է շարունակվել նաև այլ պայմաններով:

40. Ուսումնառությանը զուգահեռ Կլինիկական օրդինատորն իրավունք ունի աշխատելու, այդ թվում իրականացնելու հերթափոխային աշխատանք՝ իր կրթական բազա հանդիսացող առողջապահական հաստատությունում՝ միայն պատասխանատու բժիշկ-մասնագետի հսկողության ներքո:

41. Կլինիկական օրդինատորի կրթական բազա հանդիսացող առողջապահական հաստատությունում՝ կլինիկական օրդինատորի ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս պետք է կազմի գործնական հմտությունների, այդ թվում պացիենտների հետ աշխատանքների կամ այլ համապատասխան գործնական աշխատանքներին մասնակցությունը: Կլինիկական օրդինատորը կարող է մասնակցել նաև կլինիկական համայցերի, գիտագործնական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների (կոնսիլիումների) և գիտահետազոտական աշխատանքներին:

42. Կլինիկական օրդինատորը տարին մեկ անգամ մասնագիտական ծրագրով նախատեսված նյութի շրջանակներում ատեստավորվում է Համալսարանում սահմանված կանոններին համապատասխան:

43. Ատեստավորման քննությունը չհանձնելու կամ քննությունից բացակայելու դեպքում վերահանձնումը թույլատրվում է ևս մեկ անգամ, ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում: Երկրորդ անգամ ատեստավորման քննությունը չհանձնելու կամ երկրորդ ատեստավորման քննությանը չներկայանալու դեպքում կլինիկական օրդինատորը հեռացվում է Համալսարանից:

44. Կլինիկական օրդինատորայից հեռացված օրդինատորը կարող է վերականգնվել՝ հաշվարկելով նաև իր կողմից կրթական ծրագրի կատարած ծավալը:

45. Կլինիկական օրդինատորայի ընթացիկ ատեստավորման քննությունից անբավարար գնահատական ստանալու պատճառով հեռացված կլինիկական օրդինատորը կարող է վերականգնվել հաջորդ կիսամյակի մեկնարկին՝ միայն քննությունը հանձնելու դեպքում:

46. Ավարտական և միջանկյալ ատեստավորման հանձնաժողովների կազմը հաստատվում է ռեկտորի կողմից: Հանձնաժողովների կազմում ընդգրկվում են հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտորը, հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի դեկանը, դեկանի տեղակալները, համապատասխան ամբիոնի վարիչներն ու առաջատար մասնագետները:

47. Կլինիկական օրդինատորը անցնում է պարտադիր հարակից և մասնագիտական հարակից առարկաներ: Հարակից առարկաներից անցկացվում են ստուգարքներ և արդյունքները գրանցվում են ստուգման գրքույկներում: Ստուգարքը չստացած կլինիկական օրդինատորին թույլատրվում է մեկ շաբաթ հետո վերահանձնել ստուգարքը: Ստուգարքը չհանձնելու դեպքում չի թույլատրվում մասնակցել ատեստավորման քննություններին:

48. Ամբիոններում հաստատված պլանի համաձայն կազմակերպվում են սեմինար դասընթացներ: Յուրաքանչյուր կլինիկական օրդինատոր կիսամյակը մեկ անգամ սեմինարների ընթացքում հանդես է գալիս թեմատիկ զեկուցումներով:

Սեմինարը վարում է ամբիոնի այն մասնագետը, որի գիտական ուղղվածությունը հարում է տվյալ թեմային:

49. Ուսումնական տարվա ընթացքում ուսումնական հարցերը քննարկելու համար կազմակերպվում է հանդիպում կլինիկական օրդինատորների և Համալսարանի պրոռեկտորի և հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի ղեկավարության հետ:

50. Կլինիկական օրդինատուրայի ուսումնական ամենամյա արձակուրդի ժամկետը, որպես կանոն, օգոստոս ամիսն է:

51. Մասնագիտացման ծրագիրը լիովին կատարելուց և ուսուցման ժամկետը լրանալուց հետո, կլինիկական օրդինատորը մասնագիտական ծրագրով նախատեսված նյութի շրջանակներում, ատեստավորվում է ավարտական քննության միջոցով:

52. Կլինիկական օրդինատորների միջանկյալ և ավարտական ատեստավորման քննությունների, ստուգարքների վերաբերյալ կազմվում են արձանագրություններ:

53. Համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու, սահմանված ժամկետում ուսման վարձավճարը չվճարելու դեպքում՝ կլինիկական օրդինատորը կարող է հեռացվել Համալսարանից:

54. Ավարտական ամփոփիչ ատեստավորման քննությունը չհանձնած կլինիկական օրդինատորն իրավունք ունի՝ քննությունը հանձնել կրկին անգամ՝ 6 ամիս անց:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

55. Կլինիկական օրդինատորը կարող է փոխել և շարունակել ուսուցումն այլ մասնագիտությամբ՝ համապատասխան հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ուսուցման ժամկետով: Մասնագիտությունը փոխելու դեպքում կլինիկական օրդինատորը սովորում է վճարովի հիմունքներով:

56. Կլինիկական օրդինատորը կարող է ուսանել երկրորդ մասնագիտությամբ՝ համապատասխան Համալսարանի հանձնաժողովի որոշմամբ սահմանված ուսուցման ժամկետով:

57. Մասնագիտությունը փոխելու կամ երկրորդ մասնագիտություն ստանալու վերաբերյալ որոշումներ ընդունող Համալսարանի հանձնաժողովը կազմավորվում է Համալսարանի ռեկտորի կողմից:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

58. Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը Կլինիկական օրդինատուրա իրականացվում է Համալսարանի ռեկտորի կողմից սահմանված առանձին կանոններով:

Օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը Կլինիկական օրդինատուրայում իրականացվում է սույն կանոնակարգին համապատասխան:

Կլինիկական օրդինատուրայում օտարերկրյա քաղաքացիների ուսուցման իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 700-Ն որոշումը, այլ իրավական ակտեր:

Օտարերկրյա քաղաքացիները Կլինիկական օրդինատուրայում կարող են սովորել՝

ա) վճարովի հիմունքներով,

բ) անվճար հիմունքներով՝ միջպետական և միջգերատեսչական պայմանագրերով կամ համաձայնագրերով նախատեսված դեպքերում:

Օտարերկրյա քաղաքացիները Կլինիկական օրդինատուրա կարող են ընդունվել առնվազն՝ մագիստրոսի կրթական աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի կամ դրանց համարժեք կրթություն ունեցող անձինք:

Օտարերկրյա քաղաքացիների Կլինիկական օրդինատուրա ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի ցանկը պետք է ներառի նաև՝

ա) դիմում, ուղղված Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարին,

բ) Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված դիմում-հարցաթերթիկ,

գ) անձնագրի պատճենը,

դ) բժշկական եզրակացություն՝ դիմորդի առողջական վիճակի մասին:

Անձնագրի և կրթական աստիճանի ավարտական փաստաթղթի պատճենները պետք է ունենան տվյալ երկրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կողմից հյուպատոսական վավերացում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենքներով կամ միջազգային պայմանագրերով:

Կլինիկական օրդինատուրա ընդունվելու հայտ ներկայացրած օտարերկրյա դիմորդների փաստաթղթերի հաշվառումը և փորձաքննությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության կողմից: Օտարերկրյա կլինիկական օրդինատորներն ուսումնառության տարիներին պետք է ունենան բժշկական ապահովագրություն:

— — —